ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ-Ա

ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑԱԾ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ սպորտի բնագավառում (օլիմպիական մարզաձևեր) Հայաստանի Հանրապետության առաջնություններում, Եվրոպայի առաջնություններում և Աշխարհի առաջնություններում 1-ից 3-րդ տեղեր զբաղեցրած, Սպիտակ համայնքում հաշվառված և փաստացի բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող մարզիկներին խրախուսելու նպատակով միանվագ դրամական և այլ պարգևատրում տրամադրելուն՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Համաձայնություն տալ մշակույթի բնագավառում ձեռքբերումներ ունեցած, Սպիտակ համայնքում հաշվառված և փաստացի բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին խրախուսելուն՝ համաձայն 2 հավելվածի:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է ընդունումից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված դրույթները տարածել ոչ օլիմպիական մարզաձևերի վրա՝ կիրառելով 0,5 գործակից: